

ԳՐԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ԵՎ ԲԱՐՔԱՌՆԵՐԻ ՓՈԽՆԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ԸՍՏ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ ԲՊՐԱԿԻԳ-ԱՆԴԱՄ

Ներկա հոգվածի քննության առարկան մի կողմից՝ հայոց լեզվի զարգացման տարբեր շրջաններում հանդես եկած գրական լեզուների՝ գրաբարի, միջին դրական հայերենի, արևմտահայ և արևելահայ գրական լեզուների մերձավորության աստիճանի, մյուս կողմից՝ այդ գրական լեզուների և բարբառների փոխհարաբերության հարցերն են։ Այդ հարցերի լուծման համար օգտագործված են վիճակագրական այն տվյալները, որոնք բերված են հայ բարբառների բաղմահատկանիշ վիճակագրական դասակարգմանը նվիրված մեր աշխատության մեջ (հանձնված է հրատարակության)։

Ինչպես հայտնի է, հայ լեզվաբանության մեջ գրական լեզուների բարբառային հիմքերի հարցը եղել է տարակարծությունների առարկա։

Գրաբարի և բարբառների փոխհարաբերության մասին հայտնվել է 3 տարբեր կարծիք. 1) V դարում բարբառային քիչ թե շատ աչքի ընկնող տարբերություններ չեն եղել, և գրաբարը հենվել է ժամանակի ընդհանուր խոսակցական լեզվի վրա. 2) գրաբարի հիմքում ընկած են եղել Այրարատի խոսակցական նորմաները. 3) գրաբարի խոսակցական հիմքը Տարոնի լեզուն է (Տարոնի «բարբառը»)։ Այս բոլոր դեպքերում հնարավոր չի եղել հենվելու V դարի բարբառային վիճակի վերաբերյալ գոնե մոտավոր տվյալների վրա, մի բան, որ հնարավոր է դառնում վիճակագրական բարբառագիտության սկզբունքների հիման վրա կատարված դասակարգումից հետո։

Որպես միջին գրական հայերենի հիմք սովորաբար դիտվել է Կիլիկիայի խոսակցական լեզուն, ընդ որում վերջինիս անմիջական ժառանգներն են համարվել արդի բարբառների այն ներկայացուցիչները, որոնք Հ. Աճառյանի կողմից միավորվել են «Կիլիկիայի բարբառ» անվան տակ (Զեյթուն, Մարաշ, Հաջըն)։

Արևմտահայ և արևելահայ գրական լեզուների խոսակցական հիմքերի հարցը նույնպես վեճերի տեղիք է տվել։ Մասնավորապես պետք է նշել երկու ընդհանրացած կարծիք. 1) այդ գրական լեզուները ներկայացնում են գրաբարի և բարբառների համադրությունը. 2) նրանք կազմավորվել են բարբառային որոշակի հիմքերի վրա՝ մշակման ընթացքում ենթարկվելով այլ բարբառների և գրաբարի նշանակալից ազդեցությանը։ Որպես արևմտահայ գրական լեզվի բարբառային հիմք սովորաբար նշվել է Պոլսի բարբառը, լայն առումով փոքրասիական խոսակցական լեզուն, երբեմն նշվել է նաև Զմյուռնիայի, Ակնի բարբառների կատարած գերը։ Արևելահայ գրական լեզվի համար սովորաբար

նշվել է Երևանի կամ Արարատյան բարձառը, Լերեմն էլ, լայն առումով, արև-վելահայ բարձառների ամբողջությունը կամ գոնե մի մասը:

Բարձառների բաղմահատկանիշ վիճակագրական դասակարգումը հնարավորություն է տալիս ոչ միայն ճշտելու բարձառների փոխհարաբերության հարցը, այլև ավելի որոշակիորեն պատկերացնելու գրական լեզուների և բարձառների փոխհարաբերությունը: Այստեղ մենք հենվում ենք ավանդարտ բարձառային և ենթաբարձառային կենտրոններ համարվող, այլև որպես խոսվածք բնութագրվող մի շարք կարևոր վայրերի տվյալների վրա: Այդ վայրերի բարձառային վիճակի փոխհարաբերությունը ներկայացված է ընտրված հատկանիշների երկու կարգի ցուցակի հիման վրա՝ 100-անոց և 40-անոց, Հարյուր հատկանիշ պարունակող ցուցակի տվյալներն օգտագործված են արդի բարձառների, բառասուն հատկանիշ պարունակող ցուցակի տվյալները՝ հին և միջին շրջանի բարձառների փոխհարաբերությունը ներկայացնելու (հին և միջին շրջանների բարձառները դասակարգելու) համար: Հայ բարձառների դասակարգմանը նվիրված մեր մենագրության մեջ լրացուցիչ կերպով օգտագործված են բառային հիմնական ֆոնդի 215, 200 և 100 բառանոց ցուցակների տվյալները, որոնք բացահայտում են մոտավորապես նույն պատկերը: Սույն հոգվածում մեր եղրակացությունները կհիմնվեն զլխավորապես հնչյունաբերականական հատկանիշների վրա:

Գրական լեզուների և բարձառների փոխհարաբերության քննությունը ունի երկու կողմ՝ գրական լեզուների բարձառային հիմքերի հարցը և բարձառների մաքրության աստիճանի հարցը: Առաջին դեպքում գրական լեզուներն առնչվում են ըստ բարձառների հետ ունեցած հարաբերության, երկրորդ դեպքում բարձառներն են առնվում ըստ գրական լեզուների հետ ունեցած հարաբերության: Մինչև այժմ հայ բարձառագիտության մեջ բարձառների մաքրության մասին խոսվել է ըստ համեմատության եղր (էտալոն) ծառայող լեզվավիճակի հետ ունեցած հարաբերության. բնականաբար, այս դեպքում ևս խառնըվել են համաժամանակյա ու տարաժամանակյա հայեցակետերը, և փոխվել է համեմատության եղրը. իբրև համեմատության եղր ծառայել է սովորաբար պարբարը (հատկապես հնչյունաբանության մեջ), նրբեմն նաև արևելահայ կամ արևմտահայ գրական լեզուները (հատկապես ձևաբանության մեջ): Եթե տարբերակենք այս բոլոր դեպքերը, ապա ինչպես որ գրական լեզուների բարձառային հիմքերի մասին խոսք կարող է լինել միայն տվյալ շրջանի բարձառային վիճակի առումով (մինչդեռ մոռանալով այդ մասին՝ ուսումնասիրողները հաճախ խոսում են հին կամ միջին դարական լեզուների մասին՝ նկատի ունենալով բարձառների արդի վիճակը), այնպես էլ արդի բարձառների մաքրության մասին խոսք կարող է լինել միայն ժամանակակից գրական լեզվի հետ ունեցած հարաբերության առումով:

Ըստ հեղինակի կողմից տրված շրջանաբաժանման տարբերվում է առյուծ լեզվի պատմության 3 շրջան՝ հին (V—XI դդ.), միջին (XII—XVI դդ.) և նոր (XVII—XX դդ.): Հին շրջանի գրական լեզուն գրաբարն է, և, բնականաբար, այդ շրջանի հարցը քննելիս խոսք կարող է լինել գրաբարի բարձառային հիմքի և այդ շրջանի բարձառների՝ գրաբարի համեմատությամբ ունեցած մաքրության աստիճանի մասին: Ավելի բարդ է վիճակը միջին շրջանի դեպքում. այստեղ նախ՝ միջին գրական հայերենի կողքին որպես գրական լեզու գործում է նաև գրաբարը՝ ֆունկցիաների որոշ բաժանմամբ և երկրորդ՝ միջին գրական հայերենը դեռ չունի կայունացած նորմա ու հանգես է գալիս գրական

իւսյիկ բնույթ ունեն և, հետևաբար, համընկնում են գրաբարի համապատասխան երևույթների հետ, բ) մասամբ հիմք ունեն միջին գրական հայերենի հուշարձաններում արտացոլված որոշ երևույթներ, գ) մասամբ հատուկ են նաև արգի գրական լեզուներից մեկնումեկին՝ ի տարբերություն մյուսի, եթե մենք այս դեպքում որպես համեմատության եղբւրջներինք միայն գրաբարի առանձնահատկությունները, և հետագա փոփոխությունները քննենք ըստ գրանց, ապա փոխած կլինենք համեմատության եղբւր և պատմական բարբառագիտությունից մուտք դորժած կլինենք գրական լեզվի պատմության բնադավաւր:

Գրական լեզուների հնչյունա-քերականական առանձնահատկությունների գնահատումը հիմք ընդունված 100 հատկանիշի հիման վրա հանդիպում է զղալի դժվարությունների. ա) կան դեպքեր, երբ գրաբարի և միջին հայերենի համապատասխան (հատկապես հնչյունական) երևույթների մասին մեր ունեցած տվյալները բավարար չեն հավաստի եղբականություններ անելու համար. այսպիսի, հայտնի չէ ք, ղ, գ, ձ, ջ տառերի գրաբարյան նորմավորված արտասանությունը (շնչեղ թե՛ ոչ շնչեղ). ճիշտ է, Վ դարի բարբառային հատկանիշների մեջ դրանց շնչեղ արտասանությունը մենք դիտել ենք որպես բարբառային հատկանիշ, բայց ամենայն հավանությամբ շնչեղ և ոչ շնչեղ արտասանությունները հատուկ են եղել գրաբարի տերիտորիալ տարբերակումներին. այստեղ նպատակահարմար ենք գտել հիշյալ նկատառումներով 3-րդ կետի դիմաց տալ + նշանի. այս նույն ձևով էլ հայտնի չէ գրաբարյան ե-ի և ո-ի ճիշտ արտասանությունը, բայց քանի որ ե-ն որպես հնչույթ տարբերվել է է-ից, գերադասել ենք 30-րդ և 31-րդ կետերի դիմաց գրաբարին հատուկ համարել երկբարբառային արտասանությունը և դնել + նշանը. հայտնի չէ նաև, թե միջին հայերենն ունեցել է արդյոք կոկորդային հատուկ բաղաձայններ (ղ', կ°). արաբական զ-ն (կաֆ) միջին հայերենի փոխառություններում արտացոլված է մերթ ղ-ով, մերթ կ-ով. բ) քանի որ միջին գրական հայերենը լիովին նորմավորված լեզու չի եղել, ուստի և նրա մեջ տարբեր բարբառների ներգրման չափը որոշելը կապված է մեծ դժվարությունների հետ. այստեղ աշխատել ենք ըստ հնարավորին նկատի ունենալ բուն կիրիկյան միջին գրական հայերենի առանձնահատկությունները, թեև, իհարկե, վրիպումներն անխուսափելի են. այս նկատառումով է, որ 18-րդ կետի դիմաց դրել ենք միևնույն, թեև հանդիպում է հաճախ ձևեր որպես ոչ օրինաչափ երևույթ. մի շարք դեպքերում մենք գերադասել ենք ± նշանը՝ նկատի ունենալով տվյալ հատկանիշի ոչ հստակ արտահայտությունը. ալդ-պես ենք վարվել գործիականի օվ-ի դեպքում, որ գործածվում է միայն եզակի թվում՝ ի տարբերություն Հաջի-Հաբիբլիի (Սվեգիա) ում ձևի, բացառական-գործիականի մ-ի համար, որ միայն մասնակի արտահայտություն ունի (հմտ. յիսնէ—յիսմէ, ի ձեզնէ—ի ձեզմէ)³. 73-րդ կետը գնահատված է ±-ով, որովհետև հնարավոր է աշխարհաբարյան ետադրությունների և՛ նախադաս, և՛ նտադաս գործածություն (հմտ. Ֆրիկի մոտ՝ վեբայ երկրի, բայց ի հոդի մէջ). ավելորդ չենք համարում նշել, որ մասնակի դրսևորում ունի նաև 100-րդ կետը, որովհետև արգի բարբառների ուզել բայի փոխարեն որպես ապառնիի կազմիչ միջին հայերենում հանդիպում է կամիլ բայը. գ) դժվարություններ է հարուցում նաև արգի գրական լեզուների մի շարք երևույթների գնահատումը, որով-

3 Գրաբարում մ-ն հատուկ չէ անձնական դ՛րանուններին և ազգակցանիշ բառերին, ալց ցուցական և անորոշ դերանուններին, ուստի և 61-րդ կետը գրաբարի դեպքում գնահատված է միևնույնով:

հետև այդ լեզուների մշակման պրոցեսը նշանավորվել է բերականական ձևերի որոշակի ընտրությամբ և սկզբնապես տարածված զանազան ձևերի արտամղումով, որոշ երևույթներ դարձել են ոչ կենսունակ, և, ընդհակառակն, այլ երևույթներ սկսել են աշխուժանալ. այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը. թեև զ, ի նախդիրները գործածվել են արևմտահայ գրական լեզվի զարգացման վաղ շրջանում, և թեև արևելահայ գրական լեզվում նկատվում է ի նախդրի աշխուժացման տենդենց, այդ երկու գրական լեզվին էլ նախդիրների գործածությունը հատուկ չենք համարել. մի շարք դեպքերում օգտագործել ենք + և + նշանները՝ նկատի ունենալով տվյալ երևույթների սահմանափակ արտահայտությունը կամ գրական լեզվի միայն խոսակցական տարբերակին հատուկ լինելը. արևմտահայ շան, տաճ ձևերի կողքին ուսանավորի տան համար օգտագործվում է տունի ձևը. շարունակականի կոչ մասնիկի գործածությունը հատուկ է միայն խոսակցական տարբերակին. նգն, նկն—յն համապատասխանությունը արևմտահայ գրական լեզվին հատուկ է միայն մասամբ՝ իյնալ, բայց կանգնիլ. արևելահայ գրական լեզվի դեղորայք ձևը հավաքական արժեք ունի, իսկ տղեբ՝ տիպի ձևերը (հմմտ. և մոտեբֆ) հատուկ են միայն խոսակցական տարբերակին. հարկ ենք համարում նշել, որ ուլ լծորդությունը արևմտահայ գրականում սահմանափակ կիրառություն ունի, թեև նշված է պլյուսով (թողուլ, զբոսնուլ):

Գրական լեզուների փոխհարաբերության թվային ցուցիչները կարելի է ներկայացնել Ձ-րդ աղյուսակով:

Աղյուսակ 2

Համեմատվող գրական լեզուներ	Տարբերակիչ հատկանիշներ				ընդամենը
	հնչյունական		քերականական		
	րադաձայնական	ձայնավորային	անվանական	բայական	
1 ա. Գրաբար և միջին գրական հայերեն	7,5	5	8,5	3,5	24,5
բ. Գրաբար և արևմտահայ գրական լեզու	7	5	7,5	6	25,5
դ. Գրաբար և արևելահայ գրական լեզու	3	2	11,5	8,5	25
2 ա. Կիլիկյան միջին գրական հայերեն և արևմտահայ գրական լեզու	1,5	0	10	3	14,5
բ. Կիլիկյան միջին գրական հայերեն և արևելահայ գրական լեզու	4,5	0	14	9,5	28
3. Արևմտահայ և արևելահայ գրական լեզուներ	4	0	11	8,5	23,5

Աղյուսակի հիման վրա կարելի է անել հետևյալ ընդհանուր եզրակացությունները.

1) Չնայած ժամանակագրական տարբեր մակարդակների պատկանելուն՝ արդի գրական լեզուները գրաբարից տարբերվում են գրեթե նույնքան հատկալուրբեր 5—4

նիշնակում, որքանով միջին գրական հայերենը. սա բացատրվում է մասամբ միջին դրական հայերենի խայտաբղետությամբ, մասամբ գրաբարի և միջին դրական հայերենի բարբառային հիմքերի տարբերությամբ, մասամբ էլ արդի դրական լեզուների մշակման պրոցեսում գրաբարին նրանց զգալի մերձեցմամբ:

2) Միջին գրական հայերենը և արևմտահայ գրական լեզուն մեծապես տարբերվում են արևելահայ գրական լեզվից՝ գրաբարից ունեցած իրենց տարբերությունների բաշխմամբ. արևելահայ գրական լեզուն առաջին երկուսից ավելի մոտ է գրաբարին հնչյունապես և ավելի հեռու քերականապես:

դ) Արևմտահայ գրական լեզուն, ինչպես և սպասելի էր, երկու անգամ ավելի մոտ է միջին դրական հայերենին, քան արևելահայ գրական լեզուն. առանձնապես աչքի ընկնող են վերջիններիս քերականական տարբերությունները. սա նշանակում է, որ արևմտահայ գրական լեզուն հանդես է գալիս որպես միջին գրական հայերենի ժառանգը՝ ավելի մոտ լինելով սրան, քան գրաբարին. մինչդեռ արևելահայ գրական լեզուն ավելի հեռու է կանգնած (կիլիկյան) միջին գրական հայերենից, քան գրաբարից, որ բացատրվում է նրա և (կիլիկյան) միջին դրական հայերենի բարբառային հիմքերի տարբերությամբ:

4) Նոր գրական լեզուների՝ իրարից ունեցած տարբերությունները քանակով մոտենում են գրաբարից նրանց ունեցած տարբերություններին, որ բացատրվում է նրանց բարբառային հիմքերի և մշակման ուղիների նշանակալից տարբերությամբ:

Այժմ չորս աղյուսակով ներկայացնենք մեր գրական լեզուների՝ բարբառներից ունեցած տարբերիչ հատկանիշների քանակը՝ գրաբարի և միջին գրական հայերենի համար հիմք ընդունելով 40 հատկանիշ պարունակող ցուցակը (միջին գրական հայերենի դեպքում համեմատության համար բերվում են նաև 100 հատկանիշ պարունակող ցուցակի տվյալները), արևմտահայ և արևելահայ գրական լեզուների դեպքում՝ 100 հատկանիշ պարունակող ցուցակը (տե՛ս 3—6-րդ աղյուսակները)⁴:

Աղյուսակների հիման վրա մեր գրական լեզուների և բարբառների փոխհարաբերության վերաբերյալ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Գրական լեզուներից ոչ մեկը իր հնչյունական և քերականական հատկանիշներով նույնը չի որևէ խոսվածքի, առավել ևս՝ բարբառի հետ: Սա նշանակում է, որ գրական լեզուները մշակման պրոցեսում զգալիորեն հեռացել են իրենց բարբառային հիմքերից և ձեռք բերել ընդհանրացնող գծեր՝ ենթարկվելով նաև այլ բարբառների (միջին և նոր գրական լեզուները՝ նաև գրաբարի) ազդեցությանը: Մեր հին գրական լեզուներից գրաբարը ավելի հեռու է իր հիմքում ընկած խոսվածքներից ու բարբառներից, քան միջին գրական հայերենը, որ խոսում է վերջինիս ավելի ռենական» վիճակում գտնվելու, իր բարբառային հիմքից քիչ հեռանալու և ընդհանրապես նրա մշակման ու միօրինակացման սյրոցեսի ոչ ինտենսիվ լինելու մասին: Նոր գրական լեզուներից արևմտահայը ավելի մոտ է իր հիմքում ընկած խոսվածքներին ու բարբառներին, քան արևելահայը, որ տվյալ դեպքում բացատրվում է երկու գրական լեզուների մշակման ու զարգացման ուղիների տարբերությամբ:

⁴ Տե՛ր խնայելու նպատակով բերվում են 120-ից միայն 25-ական (գրաբարի դեպքում՝ 50) մերձավոր վայրեր: Միջակ փակագծերում տրվում են ընդհանուր ցուցակում այդ վայրերի ունեցած համարները՝ ըստ հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք գասավորության:

2. Ըստ 40 հատկանիշ պարունակող ցուցակի տվյալների՝ գրաբարը V դարում հայտնի և ճշտորեն տեղայնացվող խոսվածքներից ամենից ավելի մոտ է Տուրուբերանի (Բաղեշի, Խնուսի, Խլաթի, Բուլանդլի, Մուշի, Մանաղկերտի, Արծկևի, Արճեշի) և նրան հյուսիս-արևմուտքից ու հյուսիսից հարող՝ Բարձր Հայքի ու Այրարատի խոսվածքներին (Կարնո, Բաբերդի՝ Բարձր Հայքի արևելյան մասում, Ալաշկերտի՝ Այրարատի Բագրևանդ գավառում)։ V դ. Մեծ Հայքում շտեղայնացվող խոսվածքներից գրաբարն ամենից ավելի մոտ է Տրապիզոնի և Օրդուի միջինթաբարբառների, Ամասիայի և Առդեալի ենթաբարբառի խոսվածքներին (Ադափաղարի, Նիկոմիդիայի, Սուլավայի, Պարտիզակի, Ամասիայի, Սիվրիհիսարի, Զմյուռնիայի, Պոլսի, Ռոդոսթուլի, Տրապիզոնի, Մարդվանի, Կուտիի, Նոր Նախիջևանի, Զալթըրի, Օրդուի և այլն), որ խոսում է վերջիններիս կրողների՝ հիշյալ վայրերին մերձավոր վայրերից տեղափոխելու մասին։ Այն հանգամանքը, որ սրանք ավելի մոտ են գրաբարին, քան Մեծ Հայքում տեղադրվող խոսվածքները, բացատրվում է եզրային շրջանների (ա-

Ա Ղ յ ու ս ա կ 3

Բարբառախոս վայրեր	Տարբերիչ հատկանիշների քանակը գրաբարից	Բարբառախոս վայրեր	Տարբերիչ հատկանիշների քանակը գրաբարից
1 [11] Ադափաղար	9,0	26 [59] Մանաղկերա	14,0
2 [7] Նիկոմիդիա	9,5	27 [66] Արծկե	14,0
3 [1] Սուլավա	10,5	28 [18] Զեֆանոս	14,5
4 [9] Պարտիզակ	10,5	29 [19] Մալա	14,5
5 [15] Ամառիա	10,5	30 [25] Կյուլբին	14,5
6 [12] Զմյուռնիա	11,0	31 [27] Թումադա	14,5
7 [31] Սիվրիհիսար	11,0	32 [26] Էվերեկ	15,0
8 [5] Ռոդոսթո	11,5	33 [29] Ակն	15,0
9 [6] Պոլիս	11,5	34 [60] Արճեշ	15,0
10 [63] Բաղեշ	11,5	35 [24] Արաբկիր	15,5
11 [57] Խնուս	12,0	36 [42] Լենինական	15,5
12 [2] Կուտի	12,5	37 [67] Քեռալ	15,5
13 [14] Մարդվան	12,5	38 [8] Ասլանբեկ	16,0
14 [17] Տրապիզոն	12,5	39 [44] Խոսաբաջուր	16,0
15 [41] Կարին	12,5	40 [74] Թավրիզ	16,0
16 [64] Խլաթ	12,5	41 [10] Այուլոդ	16,5
17 [3] Նոր Նախիջևան	13,0	42 [30] Մալաթիա	16,5
18 [4] Զալթըր	13,0	43 [72] Վարդենիս	16,5
19 [43] Բաբերդ	13,0	44 [73] Թրիլիսի	16,5
20 [56] Բուլանդլի	13,0	45 [113] Շամախի	16,5
21 [16] Օրդու	13,5	46 [13] Եվդոկիա	17,0
22 [21] Շապին-Կարահիսար	14,0	47 [22] Սերասուխա	17,0
23 [53] Եդեսիա	14,0	48 [35] Բեյլան	17,0
24 [55] Մուշ	14,0	49 [46] Երզնկա	17,0
25 [58] Ալաշկերտ	14,0	50 [47] Կամախ	17,0

ներ կարող էին ունենալ ռճական արժեք և աչքի չընկնել իբրև գրական լեզվից բացահայտ շեղումներ. այլ կերպ ասած՝ գրաբարը կարող էր հանդես գալ ռճական-թերակառնական և նույնիսկ հնչյունական մի շարք տարբերակներով, որոնցից մեկն է միայն մեր կողմից հիմք ընդունվել, և, որոնց տարբերություններն այնուամենայնիվ այնքան չեն, որ դիտվեն որպես նորմայի բացահայտ խախտումներ կամ համակարգային միանգամայն այլ տարրեր: Եթե սրան միացնենք և այն, որ V գարի բարբառային տարբերություններն այնքան մեծ չպետք է լինեին, որքան արդի տարբերությունները, ապա պարզ է, որ գրաբարը իր տարբերակների ամբողջությամբ պետք է հանդես գար որպես ընդհանուր հասկանալի լեզու և հարազատորեն ընկալվեր բոլորի կողմից: Ավելորդ չենք հա-

Ա Ղ յ ու ս ա կ Ծ

Բարբառախոս վայրեր	Տարբերությունները արևմտահայ լեզվից						
	հնչյունական			քերականական			ընդամենը
	բա- ղաձ.	ձա- յ- նա- վ.	ընդ.	անվ.	բայ.	ընդ.	
1	2	3	4	5	6	7	8
1 [5] Ռոզոսթո	3,0	1,5	4,5	2,5	3,0	3,5	10,0
2 [22] Զմյուռնիա	4,5	2,5	7,0	2,0	2,0	4,0	11,0
3 [7] Նիկոմիդիա	5,5	3,0	8,5	2,5	3,0	5,5	14,0
4 [16] Օրդու	2,5	1,0	3,5	4,5	6,0	10,5	14,0
5 [17] Տրապիզոն	4,0	4,0	8,0	2,0	4,0	6,0	14,0
6 [6] Պոլիս	5,5	4,5	10,0	1,5	3,0	4,5	14,5
7 [43] Բաբերդ	5,5	1,5	7,0	3,5	4,5	8,0	15,0
8 [15] Ամասիա	6,5	3,5	10,0	4,0	2,5	6,5	16,5
9 [3] Նոր Նախիջևան	7,0	3,0	10,0	3,0	4,0	7,0	17,0
10 [1] Սուչավա	5,0	2,0	7,0	4,0	6,5	10,5	17,5
11 [4] Զալթբըր	8,0	3,0	11,0	3,0	3,5	6,5	17,5
12 [53] Եդեսիա	5,0	4,0	9,0	1,5	7,0	8,5	17,5
13 [11] Ադափաղար	8,0	3,5	11,5	2,5	4,0	6,5	16,0
14 [41] Կարին	8,5	1,0	9,5	5,0	3,5	8,5	18,0
15 [9] Պարտիզակ	5,0	6,5	11,5	3,0	5,0	8,0	19,5
16 [10] Այուդոդ	9,0	3,5	12,5	3,5	3,5	7,0	19,5
17 [21] Շապին-Կարահիսար	8,5	4,0	12,5	4,5	4,0	8,5	21,0
18 [2] Կուլտի	6,0	4,0	10,0	6,5	5,5	12,0	22,0
19 [25] Կյուրին	7,5	8,0	15,5	4,5	2,0	6,5	22,0
20 [31] Սիվրիհիսար	9,0	5,0	14,0	3,5	4,5	8,0	22,0
21 [14] Մարզվան	8,0	6,5	14,5	4,0	4,0	8,0	22,5
22 [18] Զեֆանոս	6,0	5,5	11,5	4,5	6,5	16,5	22,5
23 [19] Մալա	6,0	6,0	12,0	3,5	7,0	10,5	22,5
24 [42] Լենինական	8,5	5,0	13,5	5,5	3,5	9,0	22,5
25 [44] Խոռոքնուր	7,5	3,1	11,0	4,0	7,5	11,5	22,5

մարում նշել, որ Ստեփանոս Սյունեցու՝ VIII դ. տված՝ բարբառների դասակարգումը պիտի զգալի չափով մոտ լիներ իրական վիճակին, թեև այստեղ, իհարկե, դեր պիտի խաղալին հեղինակի բարբառային պատկանելիությունը և բարբառների իմացությունն աստիճանը, Որքանով որ հնարավորություն են տալիս դատելու V դ. (հին շրջանի) բարբառների մեր տված դասակարգումը և գրաբարի ու բարբառների փոխհարաբերության վերաբերյալ աղյուսակները, Կորենքի, Խութի (հմմտ. Սանասուն > Սասուն), Չորրորդ Հայքի, Սյունիքի, Արցախի խոսվածքները իրոք կարող էին ընկալվել որպես բարբառային զգալի տար-

Աղյուսակ 6

Բարբառախոս վայրեր	Տարբերությունները արևելահայ գրական լեզվից						Ընդամենը
	հնչյունական			բերականական			
	բա- ղաձ.	ձայ- նավ.	ընդ.	անվ.	բայ.	ընդ.	
1	2	3	4	5	6	7	8
1 [80] Էջմիածին	7,0	5,0	12,0	3,5	2,0	5,5	17,5
2 [84] Առուսպաա	4,0	3,5	7,5	5,5	4,5	10,5	17,5
3 [94] Չահարմահալ	6,0	4,0	10,0	6,5	2,0	0,5	18,5
4 [75] Թրեխի	5,0	3,5	8,5	6,5	4,0	10,5	19,0
5 [77] Երևան	8,0	5,0	13,0	3,5	3,0	6,5	19,5
6 [81] Կողբ	9,5	3,0	12,5	4,5	2,5	7,0	19,5
7 [70] Արդվին	3,5	1,5	5,0	9,5	5,5	15,0	20,0
8 [78] Քանաքեռ	8,5	5,0	13,5	3,5	3,0	6,5	20,0
9 [73] Ասարխան	6,5	2,5	9,0	5,5	7,5	13,0	22,0
10 [74] Թավրիդ	6,5	4,5	11,0	3,5	8,0	11,5	22,5
11 [79] Աշտարակ	9,5	6,0	15,5	3,5	4,0	7,5	23,0
12 [92] Զուղա	4,5	5,5	10,0	6,0	7,0	13,0	23,0
13 [93] Նոր Զուղա	4,5	5,5	10,0	6,0	6,0	7,0	23,0
14 [41] Կարին	7,5	1,5	8,5	12,0	5,5	17,5	26,0
15 [83] Գյոթգյա	6,5	8,0	14,5	5,0	7,0	12,0	26,5
16 [82] Ղալաշա	7,5	9,0	16,5	5,0	7,0	12,0	28,5
17 [43] Բարերդ	6,5	1,5	8,0	13,5	7,5	21,0	29,0
18 [1] Մուշավա	5,5	2,0	7,0	14,0	8,5	22,5	29,5
19 [17] Տրապիզոն	5,0	4,0	9,0	11,0	9,5	20,5	29,5
20 [42] Լենինական	7,5	5,0	12,5	11,5	5,5	17,0	29,5
21 [107] Թովուզ	7,5	11,5	10,0	4,5	6,5	10,5	29,5
22 [15] Ամասիա	3,5	3,5	7,0	12,0	11,0	23,0	30,0
23 [44] Խոտորջուռ	6,5	3,5	10,5	12,0	8,0	20,0	30,0
24 [113] Բուրդուռ	9,0	8,5	17,5	9,0	3,5	12,5	30,0
25 [3] Նոր Նախիջևան	8,5	3,0	11,5	11,0	8,0	19,0	30,5

բերակման ենթարկված լեզվավիճակներ. ինչ վերաբերում է Սպերին և Տալքին, ապա սրանց տարբերությունը գրաբարից չպետք է շատ մեծ լիներ, եթե դատելու լինենք մեր աղյուսակներում ընդգրկված Բաբերդի (Սմբատավանի) (Սպերում) և Խոտորչուրի (Տալքի Արսյաց փոր դավառում) տվյալներով. այս դեպքում պետք է ենթադրել, որ Սյունեցին կամ նկատի ունի կենտրոնական շրջանների խոսվածքներն ընդհանրապես, լայն առումով, որի դեպքում այդ վայրերն զգալիորեն պետք է տարբերվեին Այրարատի խոսվածքներից, կամ կարող էր իբրև նշանակալից շեղումներ ընկալել եղած մասնակի տարբերությունները գրաբարից:

3. Կիլիկյան միջին գրական հայերենի և բարբառների փոխհարաբերության վերաբերյալ ակնհայտորեն ավելի ճիշտ գաղափար է տալիս 40 հատկանիշ պարունակող ցուցակը, թեև ավելորդ չհամարեցինք համեմատության համար զուգահեռաբար բերել նաև 100 հատկանիշ պարունակող ցուցակի տվյալները: Ըստ 40 հատկանիշ պարունակող ցուցակի՝ կիլիկյան միջին գրական հայերենին ամենից ավելի մոտ են ոչ թե արևելյան Կիլիկիայի (Մարաշի, Զեյթունի, Հալբի) կամ այսպես կոչված անտիոքահայ (Քաբուսիեի, Հաջի-Հարիբի, Յոդուն-Օլուկի, Արամոյի, Քեսաբի, Բելլանի) խոսվածքները, ուրոնք եզրային դիրք են գրավել բուն Կիլիկիայի նկատմամբ, այլ առաջին հերթին Հյուսիսային Ադանիբի կամ Սանսունի (Սասունի) ենթաբառի խոսվածքները (Ալգեստանի, Գելիեգուզանի, Նիշի, Հազլույի), ապա և այն ենթաբառառների ու միջենթաբառների (Տուրուբերանի, արևելյան Բարձր Հայքի, Այրարատի Բագրևանդ գավառի, այլև Տրապիզոնի, Օրդուի, Առդեալի) խոսվածքները. որոնք մոտ են եղել նաև գրաբարին (ընկած էին նրա հիմքում): Սա ցույց է տալիս, որ ա) Կիլիկիայի կազմավորման մեջ մեծ դեր է խաղացել Սանսունից գաղթած բնակչությունը. բ) կիլիկյան «բարբառ» այն ժամանակվա վիճակը չի համընկնում արդի բարբառագիտական աշխատություններում տրված վիճակի հետ. այն շատ ավելի լայն ընդգրկում է ունեցել և զգալիորեն տարբերվել է եզրային (արևելյան Կիլիկիայի և անտիոքահայ) խոսվածքներից. գ) կիլիկյան միջին գրական հայերենի խոսակցական հիմքը կազմել են ոչ միայն բուն Կիլիկիայի, այլև արևմտյան վայրերի հիմնական խոսվածքները՝ ոչ շատ մեծ տարբերություններով: Կիլիկիայի եզրային խոսվածքներից նրան ամենից ավելի մոտ են հարավ-անտիոքահայ (Հաջի-Հաբիբլի, Յոզուն-Օլուկի, Քաբուսիեի, Քեսաբի) խոսվածքները: Այսպիսով, կիլիկյան միջին գրական հայերենը եղել է Հայաստանի արևմտյան շրջանների համար ընդհանուր հասկանալի լեզու՝ լայն խոսակցական հիմքով:

4. Ըստ աղյուսակի տվյալների՝ արևմտահայ գրական լեզվին ամենից ավելի մոտ են Պոլսի միջբարբառի (Ռոդոսթոյի, Զայուռնիայի, Նիկոմիդիայի, Օրդուի, Տրապիզոնի, Պոլսի, Ադափազարի, Պարտիզակի), Ղրիմ-Նոր Նախիջևանի, Կարբի, Մարզվանի, այլև Առդեալի, Եդեսիայի բարբառների խոս-

վածքները: Կարելի է ասել, որ արևմտահայ գրական լեզվի հիմքում ընկած են առաջին հերթին Պոլսի միջբարբառի խոսվածքները: Արևմտահայ գրական լեզուն՝ ա) բաղաձայնական առումով ավելի մոտ է հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Օրդու (2,5)⁵, Մարաշ (2,5), Ռոդոսթո (3), Տրապիզոն (4), Զմյուռնիա (4,5), Սուլավա (5), Պարտիզակ (5), էվերեկ (5), Մալաթիա (5), Նդեասիա (5), Պոլիս (5,5), Նիկոմիդիա (5,5), Ասլանբեկ (5,5), Զեյթուն (5,5), Մանազկերտ (5,5), Գելիեդուզան (5,5), Արզվին (5,5): Բ) ձայնավորների բնույթով՝ հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Օրդու (1), Կարին (1), Ռոդոսթո (1,5), Բարբերդ (1,5), Արզվին (1,5), Սուլավա (2), Խնուս (2), Ալաշկերտ (2), Զմյուռնիա (2,5), Աստրախան (2,5), Նոր Նախիջևան (3), Նիկոմիդիա (3), Կողբ (3): Գ) անվանական առանձնահատկություններով՝ հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Պոլիս (1,5), Զմյուռնիա (2), Տրապիզոն (2), Ռոդոսթո (2,5), Նիկոմիդիա (2,5), Ասլանբեկ (2,5), Ագափազար (2,5), Պարտիզակ (3), Սյուլյոզ (3,5), Մալա (3,5), Զանիկ (3,5), Սիվրիհիսար (3,5), Բաբերդ (3,5), Սուլավա (4), Նվդոկիա (4), Մարզվան (4), Ամասիա (4), Օրդու (4,5), Զեֆանոս (4,5), Շապին-Կարահիսար (4,5), Սեբաստիա (4,5), Կյուրին (4,5): Դ) բայական հատկանիշներով՝ հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Զմյուռնիա (2), Կյուրին (2), Ամասիա (2,5), Թոմարդա (2,5), Դարենդե (2,5), Ռոդոսթո (3), Պոլիս (3), Նիկոմիդիա (3), էվերեկ (3), Զաթբըր (3,5), Սյուլյոզ (3,5), Նվդոկիա (3,5), Լենինական (3,5), Նոր Նախիջևան (4), Ագափազար (4), Մարզվան (4), Տրապիզոն (4), Ասլանբեկ (4,5), Սեբաստիա (4,5), Բրզնիկ (4,5), Բաբերդ (4,5), Մալաթիա (4,5), Սիվրիհիսար (4,5), Պարտիզակ (5), Արաբկիր (5), Բեյլան (5), Քարուսիե (5):

5. Վերջապես, ըստ աղյուսակի տվյալների՝ արևելահայ գրական լեզվին ամենից ավելի մոտ են Երևանի կամ Արարատյան բարբառի խոսվածքները (էջմիածնի, Երևանի, Կողբի, Աստապատի, Քանաքեռի), ապա հյուսիս-արևելիկյան բարբառախմբի մյուս բարբառների խոսվածքները: Կարելի է ասել, որ արևելահայ գրական լեզվի հիմքում ընկած են առաջին հերթին Երևանի կամ Արարատյան բարբառի, ավելի լայն առումով՝ հյուսիս-արևելյան բարբառախմբի խոսվածքները: Արևելահայ գրական լեզուն՝ ա) բաղաձայնական առումով ամենից ավելի մոտ է հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Արզվին (3), Մարաշ (3,5), Բաստ (3,5), Աստապատ (4), Վարճավան (4,5), Զուղա (4,5), Նոր Զուղա (4,5), Սուլավա (5), Ագափազար (5,5), Հազգո (5,5), Մանազկերտ (5,5), Կարնան (5,5): Բ) ձայնավորների բնույթով՝ հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Օրդու (1), Կարին (1), Ռոդոսթո (1,5), Բաբերդ (1,5), Արզվին (1,5), Սուլավա (2), Խնուս (2), Ալաշկերտ (2), Բադեշ (2), Զմյուռնիա (2,5), Աստրախան (2,5), Նոր Նախիջևան (3), Զաթբըր (3), Նիկոմիդիա (3), Կողբ (3), Սյուլյոզ (3,5), Ագափազար (3,5), Ամասիա (3,5), Խոտորջուր (3,5), Թբիլիսի (3,5), Աստապատ (3,5), Կուտի (4), Տրապիզոն (4), Շապին-Կարահիսար (4), Բուլանդ (4), Պոլիս (4,5), Թավրիզ (4,5), Լենինական (5), Կամախ (5), Մուշ (5), Խլաթ (5), Երևան (5), Քանաքեռ (5), էջմիածին (5): Գ) անվանական առանձնահատկություններով՝ հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Թավրիզ (3,5), Երևան (3,5), Քանաքեռ (3,5), Աշտարակ (3,5), էջմիածին (3,5), Կողբ (4,5), Ղազախ (4,5), Թովուշ (4,5), Կիրովաբադ (4,5), Ղալաշա (5), Գյառզյառ (5): Դ) բայական առանձնահատկություններով՝ հետևյալ վայ-

5 Փակագծերում տրվում է տարբերիչ հատկանիշների քանակը:

ըլրի խոսվածքներին՝ էջմիածին (2), Չահարմահալ (2), Կողբ (2,5), Երևան (5), Քանաքեռ (3), Բուրդուր (3,5), Թբիլիսի (4), Աստապատ (4,5), Գորիս (4,5), Բոլնիս-Խաչեն (5), Կիրովաբադ (5): Այս տվյալները ցույց են տալիս, թե որտեղ սխալների տեղիք կարող է տալ գրական լեզուների և բարբառների փոխարարականության հարցի միակողմանի բնութագրումը, երբ հատկանշները մարդկային փոխարեն առնվում է դրանց այս կամ այն խումբը:

ВЗАИМООТНОШЕНИЕ ЛИТЕРАТУРНЫХ ЯЗЫКОВ И ДИАЛЕКТОВ ПО СТАТИСТИЧЕСКИМ ДАННЫМ

Г. Б. ДЖАМКЯН

Р е з ю м е

Возможны два подхода к вопросу о взаимоотношении литературного языка и диалектов: определение диалектной основы литературного языка, с одной стороны, и степени чистоты диалектов—с другой. В истории армянского языка насчитывают четыре литературных языка: древнеармянский (грабар), среднеармянский (киликский среднеармянский), западноармянский и восточноармянский. Вопрос о диалектных основах этих литературных языков решался по-разному, причем не соблюдалось условие рассмотрения этого вопроса на основании диалектного состояния данного времени. Исходя из сорока признаков для древнеармянского и среднеармянского и из ста признаков для западноармянского и восточноармянского литературных языков и основываясь на данных таблиц о степени распространения этих признаков в ста двадцати населенных пунктах, можно сделать следующие выводы:

1. Ни один из литературных языков по своим фонетическим и грамматическим особенностям не совпадает с тем или иным говором, что свидетельствует о их значительном удалении от диалектных основ в процессе развития и обработки.

2. Древнеармянский литературный язык (грабар) из точно локализуемых в V в. говоров наиболее близок к говорам области Турубера и прилегающих районов областей Высокая Армения и Айратат.

3. Киликийский среднеармянский литературный язык, вопреки распространенному мнению, более близок не к говорам восточной Киликии и района Антиохии, а к говорам Санасуна (Сасуна) и других западноармянских районов, близких к грабару.

4. Западноармянский литературный язык наиболее близок к говорам константинопольского междиалекта и к некоторым другим западноармянским говорам.

5. Восточноармянский литературный язык наиболее близок к говорам ереванского или араратского диалекта, затем к другим говорам диалектов северо-восточной группы.